



## **Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 6**

29 հունվարի 2021 թվականի

**«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ  
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ  
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ, 24-րդ հոդվածի 2-րդ, 25-րդ հոդվածի 6-րդ, 26-րդ հոդվածի 1-ին կետերով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 34-րդ կետով և նույն հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.3 և 3.13 կետերով, հիմք ընդունելով քվեարկության արդյունքները (Կառլեն Խաչատրյան՝ 15 քվե, Հայկազն Նավասարդյան՝ 14 քվե, անվավեր քվեներ՝ 0)՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ չի ընտրվել՝ բավարար թվով ձայներ չհավաքելու պատճառով:

2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահի լիազորությունների կատարումը նիստի ավարտից հետո ժամանակավորապես հանձնարարել խորհրդի քարտուղարին՝ մինչև խորհրդի կողմից նախագահի ընտրության մասին որոշման կայացումը: